ՀՏԴ 342.5(479.243) Քաղաքագիտություն

Ալվարդ Աբրահամյան,
ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոն

ԼՂՀ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՄԱՆ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԼԱԿԵՏՆԵՐԸ

Ներկա հոդվածում մեկնաբանելով պատմաքաղաքական փաստարկները, հեղինակը եզրահանգում է, որ Արցախյան մելիքությունների ինքնիշխանության և ինքնակառավարման ձևավորումը, վաղ միջնադարում կանոնական սահմանադրությունների հրապարակումը, խորհրդային տարիներին ԼՂ մարզային պետականության ձևի կայացումը և արցախահայության տևական ու անզիջում պայքարը քաղաքական անկախության համար գենետիկ ու հավատի նշանակություն են ունեցել ԼՂՀ-ի պետականության կառուցման գործում:

Բանալի բառեր՝ արցախահայություն, մելիքություններ, ինքնավար մարզ, ինքնակառավարում, քաղաքական կամք, վարչակարգ, քաղաքական համակարգ, պայքարի գործընթաց, համազգային միասնություն

Алвард Абрамян,
Кафедра философии и политологии АрГУ

ИСТОРИКО- ПОЛИТИЧЕСКИЕ АРГУМЕНТЫ СТРОИТЕЛЬСТВА ГОСУДАРСТВЕННОСТИ НКР

В настоящей статье, комментируя историко-политические аргументы, автор делает вывод, что формирование суверенитета и самоуправления Арцахских меликств, публикация канонических конституций в раннем средневековье, становление формы областной государственности в советские годы, продолжительная и непоколебимая борьба армянства Арцаха за политическую независимость имели генетическую миссию и значение веры в деле строительства государственности НКР.

Ключевые слова: армянство Арцаха, меликства, автономная область, самоуправление, политическая воля, административный строй, политическая система, процесс борьбы, общенациональное единство

Alvard Abrahamyan,
the Chair of Philosophy and Political Science of ASU

HISTORICAL AND POLITICAL ARGUMENTS OF THE STATEHOOD BUILDING IN THE NKR

In the given article the author, commenting on the historical and political arguments, concludes that the formation of the sovereignty and self- government of Artsakh melikdoms, the publication of canonical constitutions in the early Middle ages, the establishment of a regional form of statehood in Soviet times, the long and unshakable struggle of the Armenians of Artsakh for political independence had genetic mission and the meaning of faith in the building of the NKR statehood.

Key words: Armenians of Artsakh, melikdoms, autonomous region, self-governing, political will, administrative system, political system, the process of struggle, national unity

Անցյալ դարի 80-ականներին տևական ազատագրական պայքարի վճռական փուլում արցախահայությունը իրավական հիմք ընդունելով 1990 թվականի ապրիլի 3-ին ընդունված ԽՍՀՄ օրենքը, որը ինքնավար կազմավորումներին իրավունք էր վերապահում որոշել սեփական իրավական վիճակը ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում[1], ինչպես նաև 1991թ. օգոստոսի 30-ին <<Անկախ պետականության վերականգնման մասին>> Բաքվի ընդունած հռչակագիրը[2], ստեղծված հնարավոր պայմաններում ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի պատգամավորների և Շահումյանի շրջանի ժողովրդական դեպուտատների խորհրդի միացյալ նստաշրջանի որոշումով 1992թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց ԼՂՀ-ի կազմավորումը:[3]

ԼՂՀ-ի ստեղծման ու կայացման քառորդ դարի ընթացքում արցախահայությունը հաղթահարել է ներքին և արտաքին բազում դժվարություններ, կերտելով իր ինքնատիպ պետականությունն ու ամբողջական քաղաքական համակարգը: Ի տարբերություն ժամանակակից աշխարհում անցումային փուլում ձևավորվող նախկին գաղութային և կախյալ երկրների պետությունների, ԼՂՀ-ում պետականակերտումն ընթացել է պատմաքաղաքական հիմնավոր նախադրյալների արմատների վրա: Այս առումով փորձել ենք ներկա հոդվածում անդրադառնալ Արցախյան մելիքությունների ժամանակների ինքնիշխանության ստեղծման և ինքնակառավարման քաղաքական համակարգի կազմավորման, խորհրդային իշխանության տիրապետության ժամանակահատվածում ինքնավար մարզային պետականության ձևի կայացման և անկախ պետականության նվաճման համար արցախահայության միասնական ու համառ քաղաքական պայքարի հիմնահարցերին:

[1] Տես. Закон СССР “О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР” от 3 апреля 1990г. Ведомости Съезда народных депутатов СССР, 1990, ном.15,стр.252
2Տես. Декларация Верховного Совета Азербайджанской Республики “О востановлении государственной независимости Азербайджанской республики’’ от 30 августа 1991г. Газ.”Бакинский рабочий”, 3 сентября,1991г.
[3] Տես. <<Հայաստանի Հանրապետություն>>, 3 սեպտեմբերի, 1991թ.

Պատմական աղբյուրները վկայում են, որ համահայկական քաղաքական կյանքում տեղական մանր թագավորությունների և ապա մելիքությունների կարգավիճակով Արցախում ձևավորվել ու գործել են քաղաքական կայուն և ինքնիշխան կառույցներ, որոնց ներկայիս հերթական ժառանգորդը կարելի է համարել Լեռնային Ղարաբաղի այսօրվա հանրապետությունը: 1909 թվականին Ռուսաստանի կայսերական ԳԱ-ի տեղեկագրում հրատարակվել է արևելագետ, ակադ. Հովսեփ Օրբելու <<Հասան Ջալալ, Խաչենի իշխան>> վերնագրով ուսումնասիրությունը, որտեղ Գանձասարի կոթողում պահպանված մակագրությունների մեկնաբանություններում ընդգծվում է, որ Մեծն Հասանի թոռ և Վախթանգի որդի Հասան Ջալալը իրեն հռչակում է որպես <<Արցախ երկրի բնածին ինքնակալ թագավոր, իսկ Հասան Ջալալի կինը իրեն անվանում է թագուհի>>:[1] Դա վաղ միջնադարի այն ժամանակահատվածն էր, երբ կողմնակալ իշխանության կարգավիճակով կազմավորվում էին տեղական մանր թագավորություններ՝ յուրահատուկ քաղաքական համակարգով: 17-րդ դարի սկզբներին, չնայած պարսկական կայսերական իշխանությունը տարածվում էր նաև Արցախի տարածքի վրա, այնուհանդերձ Շահ Աբբաս արքան, լավ ծանոթ լինելով արցախցիների անընկճելի կամքին և հակաթուրքական կեցվածքին, օրինականացրել է Արցախի մելիքական քաղաքական կարգը, ընդլայնելով նրանց իրավունքները:[2] Դա հնարավորություն է տվել պահպանելու ավելի վաղ շրջաններում ստեղծված ինքնիշխանության ինստիտուտների շարունակականության պահպանմանն ու ինքնակառավարման իրավական նկատառումով կանոնական-սահմանադրական փաստաթղթերի ընդունմանը: Պատմակքաղաքական նշանակության այդպիսի փաստաթղթեր են հանդիսանում <<Աղվանից արքա Վաչագան Բարեպաշտի կանոնական սահմանադրությունը>>[3] և Գանձասարի 1714թ. գաղտնի ժողովի ընդունած կանոնները:[4] Շահ Աբբասի կողմից վավերացված Արցախի մելիքությունների իրավական-քաղաքական կարգավիճակը շարունակվեց 1736թ. գահակալած Նադիր Շահի կողմից և գոյատևեց մինչև Հարավային Կովկասի միավորումը Ռուսաստանի կայսրության մեջ: Այսպիսով, 16-18-րդ դարերում Արցախի մելիքությունները վարչաքաղաքական ինքնուրույն միավորներ էին, որոնք գլխավորվում էին մելիքների կողմից: Արցախի մելիքություններն ունեին միանման վարչական համակարգ՝ հավասար իրավունքներով: Համակարգը բաղկացած էր երկու մասից՝ առաջինն ընդգրկում էր մելիքների դաշնային միությունը, երկրորդը՝ տվյալ մելիքության տարածքում ընդգրկված վարչական շրջանները: Իրավամբ դա ինքնիշխանության և ինքնակառավարման յուրահատուկ ձև էր:

20-րդ դարասկզբին Ռուսաստանում ստեղծված սոցիալ դեմոկրատական /բոլշևիկյան/ կուսակցության ծրագրում հատուկ նշանակություն էր տրվում ռուսական կայսրությունում ազգային հարցի լուծման հիմնախնդրին:

Այդ հիմնախնդրի հիմքում դրվեցին միասնական պետության կազմում տարբեր մակարդակների համապատասխան պետականության ձևերի ստեղծման գաղափարը: Այդպիսի ձևեր են համարվել ազգային ինքնավարությունների ստեղծումը: Ինքնավարությունը դիտվել է իբրև ազգային ինքնորոշման կայացման միջոց: Սակայն <<մարզային ինքնավարություն>> հասկացության կոչողները չեն ձգտել այն ընդգրկել բազմազգ պետության դաշնության մեջ, կամ նրան տալ իրական ինքնորոշման իրավունք: Ինքնավար մարզը գտնվում էր միութենական հանրապետության կազմի մեջ: Մարզի պետական իշխանության ու կառավարման մարմինները ինքնավար մարզի ժողովրդական պատգամավորների խորհուրդն էր ու գործադիր կոմիտեն: Յուրաքանչյուր ինքնավար մարզ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ազգությունների խորհրդում ներկայացված էր հինգ պատգամավորներով:

Լեռնային Ղարաբաղը մյուս մարզերի և օկրուգների նման ոչ թե նվեր ստացավ իր քիչ թե շատ տանելի այս կարգավիճակը, այլ ձեռք բերեց տևական պայքարում թափված արյան գնով: Լեռնային Ղարաբաուում ինքնավարությունը մյուս մարզերի նման ոչ թե զրոյական մակարդակին բնորոշ հետամնացության վրա խարսխվեց, այլ անցյալի պետականությունների ու քաղաքակրթությունների ավանդույթների վրա խարսխվեց: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը բացառիկ դեր ունեցավ ղարաբաղահայության ճակատագրում: Այն պահպանեց տարածաշրջանի ինքնիշխանությունը, լեզուն, հոգևոր և քաղաքական մշակույթը, որի հիմքերի վրա ստեղծվեց մերօրյա Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը: Եթե չլինեին վերը նշված Խամսայի մելիքությունները, որոնք փոքր թագավորություններ էին կոչվում, եթե չլիներ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը չէր լինի նաև Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը: Արցախի հայ ազգաբնակչությունը ինքնավար մարզի կարգավիճակով ապահովեց իր երկրի ինքնիշխանության շարունակությունը և հող պատրաստեց անկախության համար:

Խորհրդային էթնիկ-պետական հսկայական կառույցում ունենալով իր որոշակի կշիռը, Լեռնային Ղարաբաղը օգտագործեց հնարավորությունները պահպանելու իր ներքին ինքնավարությունը, ապահովելու իր էթնիկական տարածքի վերահսկողությունը, ազգային լեզուն, մշակույթն ու ավանդույթները: Այսպիսով, Լեռնային Ղարաբաղում դարեր շարունակ գործող պետականության տարբեր տեսակներն ու մակարդակները՝ մելիքությունները, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը չնայած դասական ինքնիշխան պետություններ չէին, այնուհանդերձ ի դեմս պետականության այդպիսի ձևերի, Ղարաբաղը բոլոր դարաշրջաններում ունեցել է իր կայուն ինքնակառավարման համակարգը: Այն ռեալ նախադրյալ հանդիսացավ ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացի ճգնաժամային պայմաններում ճիշտ կողմնորոշվելու և պատմական պահը օգտագործելու միջոցով օրինական ճանապարհով իր անկախությունը հռչակելու համար: Չնայած Մոսկվայի կենտրոնական իշխանությունը Ադրբեջանաղարաբաղյան հակամարտության մեջ անմնացորդ աջակցություն էր ցույց տալիս ադրբեջանական կողմին, այնուամենայնիվ, զգալով ԽՍՀՄ-ի վերահաս փլուզումը, Ադրբեջանի Գերագույն խորհրդի 1991թ. օգոստոսի 30-ին կայացած արտահերթ նստաշրջանը ընդունեց անկախության վերականգնման մասին հռչակագիր, որպես 1918-1920 թվականների Ադրբեջանական

[1] Տես. И.А. Орбели. Асан Джалал, князь Хаченский. Известия Императорской АН, 6-ая серия, том 3-ий, 1909г., стр.13
[2] Տես. Առաքել Դավրիժեցի. Պատմություն, Երևան, 1988, էջ 85
[3] Տես. Մովսես Կաղանկատվացի. Աղվանից աշխարհի պատմություն, Երևան, 1969, Գիրք 1, գլ. ԻԶ
[4] Տես. Է.Դանիելյան. Գանձասարի 1714թ. Գաղտնի ժողովի նշանակությունը հայ սահմանադրական մտքի պատմության մեջ. <<Լեռնային Ղարաբաղի անցյալը, ներկան և ապագան>>, Երևան, 2007, էջ 80-87

հանրապետության իրավահաջորդ:[1] Այս հռչակագրով Ադրբեջանը փաստորեն հրաժարվեց Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից: Պետք է ընդգծել, որ 1918-1920 թթ. Լեռնային Ղարաբաղը ստեղծված Ադրբեջանական հանրապետության կազմում չէր: Այսքանով հանդերձ, կարևորվում է նաև այն փաստը, որ դեռևս 1990 թվականի ապրիլի 3-ից գործող <<ԽՍՀՄ կողմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգերի մասին>> ԽՍՀՄ օրենքով[2] Խորհրդային Միությունից դուրս եկող հանրապետության տարածքում գտնվող ինքնավար կազմավորումներին իրավունք էր տրվում ինքնուրույնաբար վճռել իրենց պետական-իրավական կարգավիճակը: Նշված երկու իրավական փաստերը Արցախահայությանը իրական հնարավորություն տվեցին օրինական ճանապարհով դուրս գալու Ադրբեջանի կցորդը լինելու կարգավիճակից և տնօրինելու սեփական ճակատագիրը: 17-րդ դարից սկսած Լեռնային Ղարաբաղի համար այսպիսի նպաստավոր պահ չէր ստեղծվել, որն օգտագործվեց արտակարգ հմտությամբ: 1991թ. սեպտեմբերի 2-ին Ադրբեջանի վերոհիշյալ հռչակագրից ընդամենը երեք օր անց Ստեփանակերտում հրավիրվեց Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների համատեղ նստաշրջան, որն ընդունեց բախտորոշ որոշում՝ <<Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակման մասին>>:[3] Նույն թվականի դեկտեմբերի 10-ին անցկացվեց հանրաքվե Լեռնային Ղարաբաղի հանրապետության անկախության մասին, որին մասնակցեցին ընտրողների 91,14%-ը: Կոմ քվեարկեցին 99,89%-ը:[4] 1991թ. դեկտեմբերի 28-ին կայացավ ԼՂՀ Գերագույն Խորհրդի ընտրությունները:[5]

Ծանր ու անհավասար պատերազմական պայմաններում ԼՂՀ Գերագույն Խորհուրդը 1992թ. հունվարի 26-ին որոշում ընդունեց ստեղծել ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտե:[6] Պետական այդ կառույցի խնդիրն էր համարվում Արցախի ազատագրական պայքարի մեջ միավորել հայ հասարակական-քաղաքական բոլոր ուժերին: Հանրապետության զինված բոլոր ջոկատները միավորվեցին որպես ինքնապաշտպանության միասնական ու կենտրոնացված ուժ: Սկսվեց ԼՂՀ ազգային կանոնավոր բանակի ստեղծման փայլուն հաղթարշավը:

Հայտնի է, որ ամեն մի ժողովրդի կյանքում բախտորոշ նշանակություն ունեցող պայքարը կարող է իր նպատակային ավարտին հասնել հմուտ կազմակերպիչների, մտածողների, հասարակական արժեքները համակարգողների կայացած ընտրանու կողմից պատմական պահը ճիշտ ըմբռնելու և օգտագործելու միջոցով: Ղարաբաղյան ազատագրական պայքարի գործընթացում և պետականակերտման սկզբնավորման ընթացքում Լեռնային Ղարաբաուում կազմակերպված այդ խավը հենվելով ողջ հայ ժողովրդի անձնազոհության և անմնացորդ նվիրումի վրա անսխալ քաղաքական կողմնորոշում է ընտրել այնպիսի մի տարածաշրջանում, որտեղ խաչաձևվվում էին մի քանի տերությունների, հատկապես Թուրքիայի և Ռուսաստանի շահերը: Կողմնորոշման ճիշտ ընտրությունը հանդիսացել է հաղթանակի որոշիչ նախադրյալներից մեկը:

ԼՂՀ սահմանադրության առաջին հոդվածը հռչակում է. <<Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է>>:[7] Իրավացի չի լինի միանշանակ հաստատել, որ ԼՂՀ-ում կառուցվել է դասական ժողովրդավարական պետություն, քանի որ ստեղծված նորանկախ պետականության համար խնդիր է եղել ոչ թե կազմավորման պահին գործող քաղաքական համակարգի բարեփոխումը, այլ սոցիալ-քաղաքական ողջ կառուցվածքի արմատական վերակառուցումը: Իսկ Արցախը ոչ միայն ամբողջատիրական վարչակարգից էր անցում կատարում, այլ երկաստիճան գաղութային համակարգից ազատագրվելու արդյունքում էր վերակառուցվում: Իսկ դա նորաստեղծ պետականության համար մեծ խնդիր էր, և առաջադրված էր տնտեսական ու սոցիալական լուրջ դժվարությունների առկայության պայմաններում: Ուստի լիարժեք ժողովրդավարական համակարգի կառուցումը օբյեկտիվորեն պահանջում է երկարատև էվոլյուցիոն գործընթաց: Դա անհերքելի է հատկապես փաստորեն պատերազմական պայմաններում գտնվող երկրի հասարակության համար: ԼՂՀ-ում ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացը ընթանում է վայրագ հակառակորդի կողմից պարբերաբար ձեռնարկվող սադրանքների պայմաններում: Իսկ դրա դիմակայման միջոց է հանդիսանում Հայաստանի, Արցախի և Հայկական սփյուռքի համազգային միասնությունը:

[1] Տես. Լեռնային Ղարաբաղի հանրապետություն /1991թ. օգոստոս-1992թ. հունվար/ փաստաթղթեր, Երևան, 2011, էջ 103
[2] Տես. Золян С., Нагорный Карабах: проблема и конфликт, Ереван, 2001, стр.111
[3] Տես. <<Հայաստանի հանրապետություն>>, 3 սեպտեմբերի, 1991թ.
[4] Տես. Լեռնային Ղարաբաղի հանրապետություն /1991թ. օգոստոս-1992թ. հունվար/ փաստաթղթեր, Երևան, 2011, էջ 149
[5] Տես. Նույն տեղը, էջ 174
[6] Տես. Հասրաթյան Ս., Ղարաբաղյան Պատերազմ, Երևան, 2001, էջ 32
[7] ԼՂՀ Սահմանադրություն, ընդունված 2006թ. դեկտեմբերի 10-ին, հոդված 1